ՀՍԱՆԵԼԻԵՕԹՆԵՐՈՐԴ—ՏԱՐԻ—ԹԻՒ—2125—ՇԱԲԱԹ—13—ՄԱՅԻՍ—Ն. Տ.—25—ՄԱՅԻՍ—1878

ԳԱՅՄԱՆԸ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հար. 8 Մկճ.
» » Գաւառաց » 10 Մկճ.
Վեցամսեայ » Կ. Պոլսոյ » 4 Մկճ.
» » Գաւառաց » 5 Մկճ.
Յանուցումն տողը մէկ անգամի համար 3 դուրուշ, երկու անգամի համար 2 դուրուշ, աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կը լլլայ։

# ԱՇԽԱՐՀ

## ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԳԱՅՄԱՆԸ

Դուրս գացած լրագրաց ճանրաբ ծախքը Խմբագրութեան վրայ է։

Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն Խմբագիր—Տնօրէնին պիտի ուղղուի, Գալաթիա Պանտըքճըլար Ճատատէսի թիւ 198, Դօրս խան, Մասիսի գրասենեակը։

Ճանրաբ ծախքը չվճարուած նամակ չընդունուիր։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ 13 ՄԱՅԻՍ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եւրոպայէն եկած հեռագիրք քանի մ'օրէ 'ի վեր խաղաղական են, թէ և ո՛չ Ռուսիա և ո՛չ Անգղիա պատերազմական պատրաստութիւնները դադրեցուցած չեն։ Հասարակաց ուշադրութիւնը Շուվալոֆ կոմսին ուղևորութեան վրայ դարձած է, որ Լոնտրա հասաւ։ Բայց իւր պաշտօնը խիստ գաղտնի պահուած է, և տակաւին քանի մ'օր պիտի անցնի՝ մինչև որ հասկցուի թէ արդեօք յաջողա՞ծ է, թէպէտ կը կարծուի որ պիտի յաջողի։ Շուվալոֆ կոմսն Այսթէֆանոսի դաշնադրութիւնը կը քննադատէ եղեր. ուրեմն անոր վրայ սքանչացողներէն չէ. և որովհետև պատերազմին առերևոյթ նպատակն՝ այն է Արևելից բարւոքումը՝ տէրութեանց մէջ կարծեաց տարբերութեան պատճառ մը չկրնար ըլլալ եթէ Ռուսիա բացառիկ աղդեցութեան և տիրապետութեան գաղափարներն 'ի բաց թողու, ուստի և համաձայնութիւնը կարելի է։ Բայց ասոր համար պէտք է որ Ռուսիա Պուլղարիոյ սահմանները չափաւորէ, Պուլղար չեղող տարրներն ևս բռնի Սլավեան հոսանքին մէջ մղելէ ետ կենայ, Յունաց, Հայոց և Իսլամաց իրաւունքը յարգէ. նմանապէս պէտք է որ Ասիոյ կողմն ալ չափաւորութիւն ցուցնէ։ Լաղըստանի բնակիչք յուսահատութեամբ 'ի զէն կը դիմեն իրենց հայրենիքը պաշտպանելու համար, և եթէ Ռուսիոյ նպատակն իրօք քրիստոնէից վիճակին բարւոքումն է, պէտք է որ իւր մոռած տեղերը, փոխանակ երկրակալութեան՝ տեղական բարեկարգումներ ընելով գոհ ըլլայ՝ աղդային կենաց ծաւալման վրայ հիմնեալ, և ո՛չ թէ ազգայնութիւնները խեղդելու կամ կնելու դրութեան։

* * *

Բեդրսպուրկէն Եւրոպական լրագրաց գրուած տեղեկութիւնները կըսեն թէ կէս պաշտօնական թերթերուն հրաման եղեր է լռութիւն պահելու, որպէս զի անօգուտ վիճաբանութիւններ չըլլան Ռուս և օտար լրագրաց մէջ մինչև Շուվալոֆ կոմսին Լոնտրա վերադառնալն, և Անգղիոյ ու Ռուսիոյ կառավարութեանց փոխադարձաբար ցուցած հաշտասէր դիտաւորութիւնները չչփոթին։ Համաձայնութեան պայմաններն "աշխարհավարական" ակումբներու մէջ խօսակցութեան նիւթ եղած են։ Կըսուի թէ Ռուսիա պատերազմին նպատակին վրայ պիտի պնդէ։ Բայց Պուլղարիոյ առժամանակեայ աշխարհացոյցն անփոփոխ չեն համարիր, և պատերազմական ուղղանքի պայմաններն և ուրիշ կէտեր վիճաբանութեան ենթակայ կը կարծեն։ Կարսին ետ չտալու համար պնդելու խօսք կայ, բայց Պաթումի համար այնչափ դրական կերպիւ չխօսուիր, և կը ծանուցուի թէ առանց միլիոնով բուսլիներ ծախք ընելու ճանապարհաց և ամրութեանց շինութեան՝ Պաթումի չկրնար Ռուսիոյ համար մեծ կարևորութիւն ստանալ։ Եթէ այս չափաւորութիւններն ստոյգ են, համաձայնութեան իրական կէտեր կրնան դրանուիլ, քանզի կըսուի թէ Անգղիոյ ամենէն աւելի պնդելիք կէտը Պաթումը պիտի ըլլայ, ուստից Ռուսիա կրնայ երկաթուղեաց գիծ հաստատել մինչև 'ի Պարսկաստան և ուրիշ այնպիսի երկիրներ, որք կրնան ապագային մէջ Հնդկաստանի վրայ արշաւանք մը դիւրացնել։

Մինչև յարդ Պաթումդիմադրեց, և Ռուսք չեն կրնար իրական սեփականութեան փաստ մը ցուցնել Ցասն և հինգ հազարէն աւելի Լազ, որոց մէջ կը գտնուին Զիւրիւք-Սուլու Ալի փաշա և իւր եղբայրն Օսման պէյ, զէն 'ի ձեռին իրենց երկիրը կըպաշտպանեն, և արդէն Ռուսաց հարկադակցութիւնները կարելով յետս նահանջելու պարտաւորեր են։ Լազերը կիրճերուն տիրելով ամրացուցած են, ուստի և առանց արիւնռուշտ պատերազմի անհնար է զանոնք վանել։ Բուսլիի կողմը Պալքաններուն ապըստամբութիւնը դեռ կը շարունակէ նմանապէս լեռնային տեղեր և կիրճերու մէջ։ Ի սկզբան կորուստներ և հարուածներ տրուեցան Ռուսաց, բայց վերջին լուրերուն նայելով, յաղթութիւնը Ռուսաց կողմը դառնալ սկսած էր, և ասոնք ապստամբներէն գերի և թնդանօթներ առած էին։ Կանոնաւոր պատերազմի մէջ ապստամբք անկարելի է որ Ռուսաց դիմադրեն. այսու ամենայնիւ լեռնական և անկանոն պատերազմներով կրնան Ռուսերն զբաղեցնել, անոնց փոքր զօրագունդերը զարնել ու ցրուել, և մեծ զօրութիւն մը զիրենք վանելու պարտաւորել, առանց իրենք ձեռք ինկնալու։ Այսպէս կըրնայ կռիւն երկար ժամանակ շարունակել՝ թշնամւոյն զօրութիւնը վատնելով, ինչպէս ըրած էին Պալանիայիք մեծին Նաբոլէոնի զօրայ դէմ, զորս հուսկ ուրեմն Պալանիայէն հանեցին։ Բայց Պալանիոյ մէջ ժողովուրդը մէկ ազգ մ'էր, մինչդեռ Պուլղարիոյ մէջ այնպէս չէ. Պուլղարք Ռուսաց օգտակար օժանդակներ եղան, և այժմ ամենայն փութով զինուոր կը դրուին։ Երսուն հազար Պուլղար զօրք պիտի կազմուի եղեր՝ Ռուս և Գերմանացի մարդիչներու ձեռօք, և երբ ասոնք տեղական ապահովութիւնը պահպանելու գործածուին, նոյնչափ Ռուսաց զօրք ազատ կըլլայ պատերազմի ասպարէզն երթալու։ Թօթլէպէն զօրավարն հրաման տուաւ որ Սերվիացիք Սոֆիան պահեն, որպէս զի հոն գըտնուող Ռուսական զօրքը պէտք եղած տեղեր ղրկուին։

* * *

Մէմորիալ Տիբլօմաթիք լրագիրն՝ որ ամեն ժամանակ լաւ տեղեկութիւն ունեցող թերթ մ'է, հետևեալ տողերը կը հրատարակէ իւր Լոնտրայի թղթակցէն գրուած։

"Անգղիոյ ահեղ սպառազինութիւնը, մանաւանդ Հնդկական զօրաց կոչուիլը, Քանատայի մէջ եղած պատրաստութիւնք, դաղթականութեանց նախարարին ատենաբանութիւնը, բոլոր այս պատերազմական պարագաները միակ միջոցն են խաղաղութիւնը պահպանելու։ Ես ըսի ձեզ միշտ թէ Անգղիոյ կառավարութեան ներքին համոզումն այս է թէ Ռուսիա վերջապէս պիտի զիջանի։ Շուվալոֆ կոմսին ուղևորութիւնն այս աշխարհավարութեան իրաւունք տալու երևոյթ ունի։ Լորտ Սալիզպըրի իւր միտքն ամբողջապէս չէ յայտնած Շուվալոֆ կոմսին։ Արդարև Պաթումի և Պուլղարիոյ վրայ խօսած է անոր. բայց միանգամայն նշմարել տուած է թէ կան ուրիշ կէտեր, որոց վրայ ալ Անգղիա փոփոխութիւններ պիտի պահանջէ։ Շուվալոֆ կոմսը Լոնտրայէն Բեդրսպուրկ գնաց այս կրկին համոզմամբ թէ Այսթէֆանոսի դաշնադրութեան ամբողջապէս քննութեան ենթարկելու հաւանութիւն տայ, մնացածը բան մը չէ։ Ամենընդարձակ զիջումներ պիտի ըլլան իրեն, դուցէ իսկ յաղթողին օրէնքը չափէն աւելի պիտի յարգուի։ Ռուսիոյ կայսրը մէկ կողմէ իրեն ապետաբեր ըլլալիք պատերազմի մ'և միւս կողմէ Եւրոպական պարտականութիւն մը միայն կատարող և իրեն բնաւ նուաստութիւն չբերող զիջման մը միջև գտնուելով՝ կրնայ դիչին մէկ շարժմամբ խաղաղութիւն տալ աշխարհի։ Ա.հա ասոր մէջ է բոլոր վիճակը։"

---

Վերջին թղթաբերով եկած Եւրոպական լրագրաց մէջ հետևեալ լուրերը կը տեսնենք.

Լոնտրա 15 մայիս.

Բեդրսպուրկի մէջ զրոյց կը պտըտի, կըսէ Տէյլի Նիւզի եկած հեռագիր մը, թէ Անգղիա 30000 հնդիկ զօրք կը ղրկէ Վանայ ծովուն քով՝ Կովկասի Ռուսաց սպառնալու համար։

Լոնտրա 17 մայիս.

Կառավարութիւնը Պ. Լէյըրտէն եկած կարևոր հեռագրեր պիտի հրատարակէ։

Թիֆլիզ 17 մայիս.

Պարսից Շահը պատուանշաններ տուաւ Կովկասեան դաւառաց փոխարքայ Միքայէլ մեծ դքսին և անոր որդւոյն։ Միանգամայն իւր դոհարազարդ պատկերն ընծայեց Սվիաթոբօլ Միրսքի զօրավարին, որ Մեծ դքսին օժանդակն է։

Շահը Թիֆլիզէն մեկնեցաւ 'ի Մոսկուա, ուր Քրէմլինի պալատը պատրաստուած է իրեն։

## ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 22 մայիս.

Կէս պաշտօնական համարուած լրագիրք խաղաղութեան անելիք մեծագոյն հաւանականութիւնները կը հաստատեն։

Լոնտրա 22 մայիս.

Շուվալոֆ կոմսն եկաւ, և նախարարաց խորհուրդ գումարեցաւ։

Զարս փոխադրական շոգենաւ Հընդկաստանէն զօրք բերելով Սուէյզի ջրանցքը մտաւ։ Նաւերուն մէջ քսանչորս երկու դէպք պատահելով զօրքերը քառանթինայի գրաւեցան։

Վիէննա 23 մայիս.

Այսօր առնուած լուրերուն նայելով, Ռուսիոյ և Անգղիոյ միջև բանակցութիւնք լաւ ճանքաւ մէջ են։

Լոնտրա 23 մայիս.

Շուվալոֆ կոմսն հոս հասնելուն պէս Լորտ Սալիզպըրիի հետ տեսակցեցաւ։ Անմիջապէս յետոյ նախարարք 'ի խորհուրդ գումարեցան։ Գերմանիոյ դահաժառանգ կայսրորդին յանձնարարեց Լորտ Պէքոնսֆիլտի և Թադուէյնն որ Ռուսիոյ հետ համաձայնին։

Ընդհանրապէս համոզում կայ թէ տէրութեանց խորհուրդը պիտի գումարի։

Պէրլին 23 մայիս.

Կառավարութեան ներկայացուցած հակընկերվարական օրէնքը չընդունուեցաւ երեսփոխանաց մեծամասնութենէն։

Լոնտրա 23 մայիս.

Շուվալոֆ կոմսն երէկ քսանչորս հաւաւ և այսօր պիտի տեսակցի Լորտ Սալիզպըրիի հետ։ Տպաւորութիւնները լաւ են։ Եթէ Անգղիա Ռուսիոյ տաքարկութիւններն ընդունի, խնդիրն անմիջապէս լուծուելու կարծիք կայ։

Բեդրսպուրկ 23 մայիս.

Տէրութեանց խորհրդոյ գումարումն իբրև հաւատաի կը նկատուի։

Կորչաքոֆ իշխանը բարւոք վիճակի մէջ է։ Կը յուսացուի որ պիտի կրնայ Տէրութեանց խորհրդին ներկայ գտնուիլ։

Պէլկրատ 23 մայիս.

Ռուսիա ծանուցանել տուաւ Սերվիոյ թէ խոստացեալ դրամական նպաստի յաւելուածները մինչև մայիսի վերջը պիտի վճարուին։ Կարևոր գումար մը ղրկուած ըլլալով, պատերազմական գործոց նախարարը շատ պիտոյք ապսպրեց դրամն բանակին համար։ Սերվիական բանակին մէջ գտնուող Ռուսաց գինուորական կցորդ Պոպրիքօֆ զօրավարը Բեղրըսպուրկ կոչուեցաւ։ Սերվիական զօրաց վիճակին վրայ տեղեկագիր մը չինելու։

Մատրիտ 23 մայիս.

Սպանիոյ մէջ Եունքէրայի մօտ հանրապետական հրոսախումբ մը տեսնուեցաւ։

Լոնտրա 24 մայիս.

Մօրնինկ Բոսթ կէս պաշտօնական տեղեկութիւններէ առնելով կըսէ թէ Շուվալով կոմսն ապահովութիւն տուեր է Անգղիոյ կառավարութեան թէ Թօթլէպէն զօրապետին հրաման գնացեր է որ Կ. Պոլսոյ կողմն յանկարծական գրաւման փորձ բնաւ չընէ։

Ուրիշ լրագիրք ալ կը հաւատան թէ Զարը մեծամեծ զիջումներ կընէ և թէ տէրութեանց ժողովոյ գումարումն ապահովեալ կրնայ նկատուիլ եթէ ճախող դէպք մը վրայ չգայ։

Լոնտրա 24 մայիս.

Երեսփոխանաց ժողովին մէջ Հարթինթըն մարքիզին առաջարկն, որով Եւրոպոյ մէջ Հնդիկ զօրք գործածելուն համար կառավարութիւնը պարտաւել կուզէր, 226ի դէմ 347 ձայնիւ մերժուեցաւ։

Անգղիոյ խորհրդարանն հաւանականաբար մինչև յունիս 7 պիտի գոցուի։

Կառավարական լրագիրք կըսեն թէ Շուվալօֆի կոմսին բերած առաջարկութիւններն համաձայնութիւն գոյացնելու և տէրութեանց ժողովոյ գումարումն ապահովելու դիւրութիւն տուող բանակցութեանց հիմեր կընծայեն։

Բեղրսպուրկ 24 մայիս.

Մինչև ցարդ ամեն բան տէրութեանց ժողովոյ քիչ օրէն գումարումը խոստանալու երևոյթ ունի։

Պարսից Շահն երէկ հոս հասաւ։

Վիէննա 24 մայիս.

Տէրութեանց խորհուրդն երթալու համար Անտրաշի կոմսին ուղեկից ըլլալիք պաշտօնատարաց հրաման եղաւ որ ճանրու պատրաստ գտնուին։

Լոնտրա 24 մայիս.

Կէս պաշտօնական լրագիրք կը ծանուցանեն թէ Ռուսիոյ հետ բանակցութիւնք փութաջանութեամբ կը շարունակին, և թէ Ռուսիոյ կառավարութիւնն հաշտասէր դիտաւորութիւններ ցոյց կուտայ և Տէրութեանց ժողովին գերիշխանութիւնը կընդունի։

Լոնտրա 24 մայիս

| | | |
|---|---|---|
| Օսմ. Քոնս. | | 9 3/4 |
| Փոխ. | 1865 | 10 |
| » | 1869 | 9 7/16 |
| » | 1871 | 41 |
| » | 1872 | 17 1/4 |
| » | 1873 | 9 3/8 |
| » Եգիպտ. | | 64 1/2 |
| Անգղ. Քոնս | | 96 13/16 |

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ Անգղիոյ թագուհւոյն ծընընդեան 59րդ տարեդարձն ըլլալով, մայրաքաղաքիս նաւահանգիստը գտնուող անգղիական նաւերը դրօշակներով զարդարեցան և Օսմանեան քորվէթն ալ չնորհաւորութեան թնդանօթներ արձակեց։

Այս առթիւ երէկ իրիկուն Անգղիոյ դեսպանատունը կոչունք մը տրուեցաւ, որուն հրաւիրեալ էին դեսպանք նախարարք և բարձր պաշտօնաւորք։

---

Բ. Դրան հրդեհին վրայ հետևեալ մանրամասն տեղեկութիւնները կը տեսնենք Թուրք լրագրաց մէջ։

Կրակն ըստ ոմանց Պետական խորհրդոյ Մաղպաթա օտասի կոչուած սենեակէն ելեր է ժամ 6 ին միջոցներն, ըստ ոմանց ալ՝ դատական պաշտօնատան դիւաններուն քանի մը կողմէն միանգամայն ելեր է, այնպէս որ առանց մուխ նշմարուելու յանկարծ բոցերը տեսնուեր են. ջրհաններն և այլ օգնութիւնները կէս ժամ ետքը հասեր են երբոր հրդեհը սաստկապէս ճարակած էր, որով չկրցաւ առաջքն առնուիլ, և մինչև ժամը 11 շարունակելով, դատական պաշտօնատունը, Պետական խորհրդոյ, Թէշրիֆաթի, Ամէտիի, Իճրա և Հավալէ ճէմիէթներու յարկերն և ուրիշ այլ և այլ դիւաններ իրենց բոլոր թուղթերովն այրեցան։ Միայն Մեծ-Եպարքոսութեան և արտաքին գործոց նախարարութեան յարկերն ու դիւաններն ազատեցան՝ մէջտեղի հատ պատերուն և երկաթէ դռներուն օգնութեամբ։ Դատական պաշտօնատան ամենակարևոր թուղթերն ու դրամական աւանդները պարունակող երկաթէ մեծ սնտուկն հրդեհին մարելէն ետև հրալից փլատակներուն մէջէն դուրս հանուեցաւ հրաշէկ վիճակի մէջ և անդադար ջրուեցաւ։ Երէկ պիտի բացուէր։ կը յուսացուի որ մէջի դրամական աւանդներն անվնաս մնացած են։

Այրած յարկերուն պահապանները բանտարկուելով քննութեան ենթարկուած են։

Կըսուի թէ դատական գործոց և Պետական խորհրդոյ դիւաններուն մէկ մասն երեսփոխանաց և աւագաց ժողովատեղիներուն մէջ պիտի հաստատուին առժամանակեայ կերպիւ, մէկ մասն ալ Թօփ դարուի պալատը կամ Սուլթան Պայազիտ ֆեսամիլ փաշային ապարանքը։

---

Հինգշաբթի օրը նախարարաց արտաքոյ կարգի ժողով մը գումարեցաւ Եըլտըզի պալատը՝ Վեհ. Սուլթանին նախագահութեան ներքև, և կըսուի թէ երկուշաբթի աւուր Զրաղանի դէպքին վրայ խորհուրդ եղաւ։

Ցիշեալ յիմարական փորձին մասնակից կամ կամակից ըլլալով բռնուած անձանց քննութիւնն Եըլտըզի պալատին մէջ կը կատարուի յատուկ յանձնաժողովոյ մը ձեռօք։

Զերբակալելոց մէջ կը գտնուին նաև Ֆիլիպեցի Հաճի Ահմէտ փաշա և Նուրի պէյ։

---

Պասիրէթի տնօրէն Ալի էֆէնտիի բանտարկութեան պատճառաւ Պասիրէթ լրագրին հրատարակութիւնը դադրեցաւ։

Կըսուի թէ Զրաղանի դէպքին նախընթաց կիրակի օրն Ալի էֆէնտին Ալի Սուավիի տունը ճաշեր է, բայց Պասիրէթի տնօրէնը կուրանայ զայս։

---

Վերջին պատերազմէն 'ի վեր Ռումելիէն ու Անատոլուէն մայրաքաղաքս պարէն գալը նուազած և այս պատճառաւ ամեն բան, և գըլխաւորապէս միսը փայտն ու ածուխը չափազանց սղած ըլլալով, կառավարութիւնն հրաման ղրկեց Սէլանիկի կուսակալութեան որ աչխար ածուխ և փայտ ղրկէ 'ի Կ. Պոլիս։

---

Հինգշաբթի օրը տէրութեան նախարարներն իրենց առաջին այցելութիւնը տուին Ռուսական նոր դեսպան Լոպանոֆ իշխանին։

Նոյն օրն Օտէսայէն Ռուսական շոգենաւով 550000 Բոլ իմբէռիալ ոսկի եկաւ. Ռայթէֆանոսի Ռուսաց բանակակեդրոնը։

---

Զորեքշաբթի օրէն 'ի վեր բազմաթիւ շոգենաւներ անդադար գաղթական կը փոխադրեն մայրաքաղաքէս Անատոլու։

---

### ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

#### ԷՍՀԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

| | |
|---|---|
| 12 մայիս ուրբաթ իրիկուն | 10,20 |
| 13 մայիս շաբաթ առաւօտ բացուեցաւ | 10,21 |
| ժամ 6 ին | 10,18 |
| Ռումելիի երկաթուղի | Ֆր. 35 75 |
| Թղթադրամ | ոսկ. 281 10 |

### ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Կ. Պոլիս 12 Մայիս

| | | |
|---|---|---|
| Սօսիէթէ Ժէնէրալի բաժ. | Անգղ. ոսկ. | 3, 3 |
| » Փոխանակութեան | » | 2,10 |
| Կ. Պոլսոյ Պանքային | » | 3,10 |
| Քրէտի Ժէնէրալ | » | 2,18 |
| Քրէտի Օսթրօ—Թիւրք | » | — |
| Փոխ. 1863 | Ֆր. | 46 |
| » 1865 | » | 47 |
| » 1869 | » | 45 |
| » 1872 | » | 15 50 |
| » 1873 | » | 44 |
| Թրամուայ | Օսմ. ոսկ. | 1 10 |

---

# ԱԶԳԱՅԻՆ

## ՀԱՅՐ.—ԻՐԵՆՑ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ

(Շար. Ե. Վերջ տես Թիւ 2424)

Առաւել նշանաւոր և տևական եղաւ սակայն Վենետկոյ Հայկական հաստատութիւնն, որոյ հետ Պայրընն բանաստեղծին անունն հետաքրքրական յարաբերութիւն մ'ունեցաւ։ Մըխիթար վարդապետն, որ իւր անունը կրող միաբանութեան հիմնադիրն է, Կ. Պոլսոյ և Մօրայի մէջ 'ի զուր հանդիստ փնտռելով, ուրիկ հետզհետէ Թուրքաց առջև փախչելու պարտաւորուած էր, Վենետկոյ հանրապետութենէն ապաստանարան խնդրեց։ Վենետկոյ կառավարութիւնն օրէնք մ'ունէր որ օտարականները կարգելուր իւր քաղաքին մէջ հաստատուիլ։ ուստի Մխիթարեան միաբանութեան Ս. Ղազարու կղզին տուաւ, Վենետիկէն երկու մղոն հեռի, որ այնուհետև միշտ ուղևորաց հետաքրքրութեան առարկայ եղած է։ Ութևտասներորդ դարուն սկիզբէն 'ի վեր Ս. Ղազարու վանքը գոնէ Հռոմէական Հայոց համար լոյս մ'եղաւ։ Մըխիթարայ քերականութիւնն ու բառգիրքն իւր աւերեալ երկրին գրական վերակենդանութեան սկիզբն եղան. իւր կրօնակիցը՝ Սէն Մարթէն՝ և շատ մը Գաղղիացի, Գերմանացի և Ռուս բանասէրք Հայերէն լեզուն մշակեցին։ Ս. Ղազարու մամուլը խիստ պատուաւոր գիրք մը բռնած է տըպագրական պատմութեան և յառաջդիմութեան մէջ։ Հռոմի հաւատոյ ծաւալման դպրոցին հետ ունեցած սերտ յարաբերութիւնը զայն միջոց մ'ըրած է Արևմտեան դաղափարաց ծաւալման, ինչպէս նաև՝ դժբաղդաբար՝ Հռոմէական աղդեցութեան. քանզի Մխիթարեան վանքը Լուսաւորչական և Հռոմէական Հայոց մէջ բաժանումն ընդլայնած է, որով ազգին այս երկու մասն իրարու վրայ հակակրութեան զգացմամբ կը նային, հակակրութիւն մը, որ առաջին կարգի գրչի մը խօսքին նայելով՝ Հրէի մը հազիւ կը ցուցուի *։

Պայրընն 1816ին վերջնական կերպիւ անգղիայէն մեկնած էր իւր կընոջ հետ ունեցած յարաբերութեան խզուելուն վրայ։ Բանաստեղծը Վենետիկ հաստատեց իւր բնակութիւնը։ Անկից Մուրի և Մըրիի գրած նամակները գլխաւորաբար երկու նիւթոց նուիրուած են, այն է իւր գայթակղական սիրահարութեանց և Հայերէնի ուսման։ «Ես այնպէս գըտայ, կը գրէ, թէ իմ միտքս զբաղելու պէտք ունի, և հոս զրօսանքի համար գտնուած ամենէն դըժուարին բանն Հայերէնի ուսումն ըլլալով, ես զայն ընտրեցի իմ ուշադրութիւնս խոչտանգելու համար։ Հայերէնն հարուստ լեզու մ'է, և զայն ուսանելու աշխատութիւնը լիովին կը փոխարինէ։» Պայրընն բաւական բատակ ծախք ըրաւ նաև Հ. Յարութիւն Աւդերեանի յօրինած քերականութեան տպագրութեանը նպաստելու համար, և Պ. Մըրիէն խընդրեց որպէս զի փնտռէ և հասկնայ թէ արդեօք Հաւիսէրնի տպագրած Մովսէս Խորենացւոյն Հայաստանի պատմութեան համար գործածեալ տառերն Անգղիոյ ճեմարանաց մէջ տակաւին մնացած էին։ Պայրընն կորընթացաց առ Պօղոս առաքեալն գրած թուղթն և Պօղոսի պատասխանը թարգմանեց։ Եկեղեցական գըրութեանց և Աստուածաշունչի քննադատութեան մէջ Պայրընի ունեցած տեղեկութիւնն այս գիտութեանց այն ժամանակի աստիճանէն շատ վար էր։ Վերոյիշեալ յայտնի կեղծ գըրուածները սերտելէ ետև այսպէս կը գրէր առ Մուր. «Այս թուղթը խիստ ուղղափառ կերևի ինձ, ուստի և Աստուածաշունչի լեզուով Անդղիերէնի թարգմանեցի։» Սոյն թարգմանութիւնը կրնայ տեսնուիլ Մուրի հրատարակած Լորտ Պայրընի թուղթերուն և օրագրութեանց մէջ։ Բանաստեղծին Մխիթարեան միաբանութեան վրայ ըրած նկարագիրն աւելի մեծ արժէք ունի. վանականք տակաւին պարծանօք կը ցուցնեն Պայրընի ուսման դրասեղանը։ Բայց Պայրընի խօսքերն աւելի յարմար կուգան Լուսաւորչական Հայոց, որք ազգին մեծամասնութիւնը կը կազմեն, և որք բաղդատաբար աւելի լաւ պահպանած են իրենց եկեղեցւոյն հիմնադիր Ս. Գրիգորի մաքրութիւնը ու պարզութիւնը։ «Այս մարդիկը, կըսէ, հալածեալ և ազնիւ ազգի մը քահանայներն են, որ հրէից և Յունաց գերութեան և տառապանաց բաղդակից եղած է, առանց առաջնոյն մեղամաղձոտութեան և վերջնոյն ստրկաբարոյութեան ենթակայ ըլլալու։ Այս մարդիկն հարըստացած են առանց վաչխառութեան, և պատիւներ ձեռք բերած են, որք կրնան գերիներու տրուիլ՝ առանց խարդաւանաց։ Բայց գերութեան տանը մէկ մասին մէջ երկար կեցած են, և այն մասը շատ մ'ապարանների բազմապատկուեր է։ Թերևս դժուարին է գտնել ազգի մը տարեգրութիւններն՝ որ նուազ արատաւորեալ ըլլան եղեռնագործութեամբ քան զՀայոցն, որոց առաքինութիւնները խաղաղասիրութեան արդիւնք են, և մոլութիւնները բռնութեան։ Իրենց բաղդն ի՛նչ որ ըլլայ, և պէտք է խոստովանիլ որ շատ դառն եղած է, ի՛նչ որ ըլլայ իրենց ապագայն, իրենց երկիրը խիստ ուշադրութեան արժանի է։» Պարսկաստանի Մարդպաններն և Թուրքիոյ փաշաները, կը յարէր Պայրընն, աւերակ դարձուցին այն երկիրն՝ ուր Աստուած զմարդս 'ի պատկեր իւր ստեղծեց։ Պայրընի լուսագոյն բնաւորութիւնը գո՛նէ երբեմն Ս. Ղազարու մէջ երևան կելնէր։ Հոն նախ տոչորեցաւ նա այն սիրով վասն հալածեալ ազգի մը դատին՝ որ զինքն առաջնորդեց 1823ին իւր կեանքը նուիրելու վասն Հելլենական անկախութեան։

Հելլենական խնդիրը կիսով և եթ լուծող պատերազմին (1828–29) վերջը, որ մեր ժամանակն հարաւային Արևելեան Եւրոպոյ չփոթութեանց աւելնալու նիւթ եղած էր, Հայոց մէկ մասն ազատեցաւ հարստահարութենէ, բայց միմիայն իրենց այն ազգակցաց թուոյն վրայ աւելնալու համար, որք Վրաստանի մէջ Զարին երկաթի գաւազանին ներքև ինկած էին։ Իւր այս նոր հպատակաց հա-

* Այս կարծիքը սխալ է՝ գոնէ ներկայ ժամանակիս համար, ուր Արևելեան Հայք ինչպէս նաև Կաթոլիկ Հայոց լուսաւորեալ մասը սիրով և համակրութեամբ կը վարուին միմեանց հետ՝ իբրև համարիւն ազգակիցք։ Ծան. Խմբ.

աստարիմ ծառայութիւններն 1813ին այնչափ մեծ էին, որ Ալէքսանդր Ա. Ռուսաց կայսրը գոհունակութեան նամակ մ'ուղղեց անոնց, որոյ մէջ «մեր սիրելի և հաւատարիմ ամեն կարգի Հայ ժողովուրդն որ 'ի Վրաստան կը բնակի» կըսէր։ Անկէ կէս դար վերջն, և Թուրքիոյ դէմ ներկայ պատերազմին մէջ ամեն ժամանակէ աւելի Հայաստան ամենէն յաջողակ զօրավարներ և իւր լաւագոյն արիւնը տուաւ 'ի ծառայութիւն Ռուսիոյ։ Հայաստանի զաւակունքն ասպարէզ գտած են նաև իբրև կառավարութեան պաշտօնատարներ և ուսանողներ 'ի Բեռլրսպուրկ և 'ի Մոսկուա։ Բայց այս ամենն իրենց ազգայնութիւնն և եկեղեցին թողլու գնով է։ Ռուսիա աւելի կը շահի իւր տուածէն, եթէ կայ բան մը որ կարենայ փոխարինութիւն համարուիլ ազգային և աղատ կեանքի մը զլացման։ Նավարինի պատերազմէն շատ առաջ Հայ գաղթականներ Ռուսիոյ ծառայութեան մէջ գտնուելով իրենց ազգակիցներէն յորդորուելով, այն ատենուան Թուրքիոյ զեղծումներէն փախած և Զարին «Հայրական» բազկաց մէջ ինկած էին։ Լազարէֆ ծովապետն 1832ին եօթանասուն հազար Հայ ընտանիք համոզեց Ռուսիոյ հարաւային անապատները գաղթելու, բայց հարիւրաւորք դարձեալ իրենց հին բնակարանները փախան, ճանապարհին անօթութենէ և ցուրտէ մեռնելով։ Ռուսական պատերազմաց փառաւորագոյն տարեգրութեանց մէջ կը գտնուին հին արքունական արիւնէ Բագրատիոնի, Պուսպալովի, Մատաթովի և ուրիշներու անուններ, որք Ռուսանալով հիմա կէս ծածկուած են։ Բայց լրագրի մը խօսքն առանց ստուգութեան չէ. «Հայաստանի զաւակաց քիչերն իրենց ապրուստ կը գտնեն խանութի մէջ, իսկ շատերն իրենց մահը կը գտնեն պատերազմի դաշտին վրայ»։ Այսու ամենայնիւ Թուրքաց դէմ եղած ամեն նոր պատերազմաց մէջ Հայ անուններ դարձեալ 'ի վեր կելնեն։ Երբեմն Ռուսաց դէմ ատելութիւնն Օսման փաշայի նման զինուոր մ'երևան կը հանէ։ Բայց Հայ զօրավարք էին որ Թուրքերը մղեցին Պայազիտէն, Կարսէն և Կարինէն։ Անոնց ամենէն յաջողակը, Լորիս Մէլիքոֆ, որոյ առջև Կարս երրորդ անգամ ինկաւ, սև մազեր, թխագոյն աչք, դիմաց գծագրութիւն, և մըտաւորական ծանրութիւն ունի այն հին սեռին յատուկ, որ քաղաքակրթուած էր երբ Աստրեստան իւր տոխտակէ (թագէ) գրասենները կը գիզէր, որ նախ քրիստոնէութեան լոյսն ընդունեց, որ ընդ երկար Եւրոպիոյ պատուարն եղաւ նախ Մոգերուն և յետոյ Պարակինոսաց դէմ, որ աշխատասէր հաւատարիմ և բարեկիրթ քաղաքացիներ ունի զիրենք ընդունած երկիրներուն մէջ։

Այս հնագոյն քաղաքակրթութիւնը, այս մաքրագոյն եկեղեցին, այս բարձրագոյն ազգային կեանքը, այս պատմական ժողովուրդը կորսուի՞ պիտի Ռուսական փառամոլութեան տակաւին ամուլ միակերպութեան մէջ։ Չեմ կրնար ըսել թէ հարբստահարութեան չարունակութիւնը լաւագոյն է. բայց Հայաստանի, ինչպէս նաև Պուլղարիոյ, Պոսնիոյ և Յունաստանի մէջ ամենէն լաւ եղանակն է տեղական ինքնօրինութեան վերադարձն, որոյ համար չկայ քրիստոնեայ ազգ մը՝ որ այնչափ յարմարութիւն և այնչափ հին իրաւունք ունենայ՝ որչափ Հայերը։

ՃՕՐՃ ՍՄԻԹՀ

---

Ալէքսանդրապոլէն (Կիւմրի) Տըփխիսի Մշակ լրագրին գրուած նամակի մը մէջ կը կարդանք թէ յիշեալ քաղաքին մէջ՝ Հայոցմէ զատ 150 տան չափ Յոյն և 100 տան չափ ալ Թուրք բնակիչք կան եղեր, և տոնց ամենն ալ Հայերէն կը խօսին։

«Յոյները, կըսէ յիշեալ նամակագիրն, առանց բացառութեան չը գիտեն իրանց մայրենի լեզուն, Հայոց լեզուն ընդունել են և գործ են ածում մայրենի լեզուի տեղ։ Ես առիթ ունեցայ ծանօթանալ այս տեղի քանի Յոյն ընտանիքների հետ, բայց մի անգամից շատ դժուար էր որոշել նրանց Հայ ընտանիքներից, որովհետև թէ հագուստով և թէ տեսքով բոլորովին նման են ու շատ գեղեցիկ խօսում Հայերէն, և այդ բաւական նուրբ և մաքուր դարձուածներով։ Նրանց փոքրիկ մանուկները 3—4 տարեկան, իրանց թոթով լեզուով հիանալի կերպով արտասանում են Հայերէն բառերը։ Միով բանիւ, եթէ մեր լուսաւորված Հայ ազգասէրների ընտանիքների մէջ Հայ մանուկները պարելով իրանց ծնողների շուրջը նրանց «դէդա, մամա» են կանչում, այստեղ Յոյն մանուկները իրանց ծնողներին «հայրիկ և մայրիկ» են կանչում։ Առհասարակ պէտք է ասել, որ Յոյները աւելի լաւ են Հայերէն խօսում քան թէ իրանք Հայերը։ Թուրքերը, կարելի է ասել, նոյնպէս վարժ են Հայերէն լեզուի մէջ, բայց որանց խօսակցութիւնը ինչպէս և ուրիշ լեզուներով՝ շատ անճոռնի է։

«Յոյները, չնայելով որ դեռ ևս զուրկ են մնացել բարոյական կրթութենից, ինչպէս և այստեղի Հայ հասարակ ժողովուրդը, այնու ամենայնիւ նրանց ընտանիքները Ասիական փակված կեանքից ազատ են պահել իրանց։ Առհասարակ Յոյն կանայք և օրիորդներ, ծանօթ, անծանօթ, օտար կամ ազգակից ազամարդիկներից երեսները ծածկելով չեն փախչում, հետները ազատ խօսում ու պատասխանում են։ Ընդհակառակն այս տեղ Հայ կանայք, 'ի հարկէ բացառութեամբ մի քանի լուսաւորեալ գերդաստաններից, ենթարկված են նոյն Ասիական փակված կեանքի անչընորհ և անճոռնի՞ սովորութեանը։ Հայ կանայք և օրիորդներ օտար կամ ծանօթ մարդկանց հանդիպելով ծածկվում են, փախչում են ինչպէս ահռելի հրէշներից։ Հայի տանը մուտք գործող անձինք իրաւունք չունեն գեղեցիկ սեռի պատկերը տեսնելու։ Բայց եթէ պատահմամբ բարեբաղդութիւն ունենան տեսնել անգամ, և եթէ նրանք համարձակվեն քաղաքավարութեամբ դիմել նրանց հարցնելով թ'ինչպէս է ձեր առողջութիւնը, կամ թ'ինչ վիճակի մէջ են ձեր ընտանեկան տնտեսական գործերը, նրանք երեսները դարձնելով քթերի տակից անլսելի ձայնով միայն կը փսփսան։ Միով բանիւ, եթէ տանտիրոջից հրաւիրված անձինք ներս մտնեն տան հիւրասենեակը սը պատահմամբ դտնվում են կանայք, կամ հարսեր և օրիորդներ, սրանք սոփված են անպատճառ դուրս գնալ սենեակից, կամ գոնէ հիւրերի ներկայութեան ժամանակ վստահութիւն չունեն միմեանց հետ բարձր ձայնով խօսակցել։ Ահաւասիկ, այսքանով ընթերցողը թող ինքը գաղափար կազմէ թէ ինչ դրութեան մէջ է այստեղ Հայ հասարակութեան ընտանեկան կեանքը։ Բայց և պէտք է խոստովանվել, որ բարեբաղդաբար այստեղ Հայ կանայք չափազանց պարկեշտ, աշխատասէր և բնութեամբ բարերարող են քան թէ իրանք տղամարդիկը, որով իրաւունք են տալիս ինձ ասելու՝ կարող են պատիւ բերել իրանց բոլոր ազգակից քոյրերին։»

---

9 մայիս 1878 Նիկոմիդիա

. . . Խմբագրապետ.

Քաղաքիս մէջ զգացուած երկրաշարժի ցնցումը՝ որ ապրիլ ամսոյ մէջ սաստկապէս կրկնուեցաւ, գրեթէ տիւ և գիշեր կը շարունակի թեթև կերպով, և սարսափ կազդէ ամենուն. բայց այս մասին լրագրաց հրատարակութիւնները մեծ մասամբ չափազանցութիւն են։ Ստոյգ է միայն որ առաջին երկրաշարժին պատճառած ճնասը աւելի մեծ է քան երկրորդինը. ստոյգ է որ առաջին և երկրորդ երկրաշարժի ցնցմամբ քաղաքիս շուկայի քարուկիր շէնքերուն մեծագոյն մասը քիչ ու շատ ճնասուած, երկու մզկիթ կիսով չափ փլած և անոնց աշտարակները կործանած են. ստոյգ է որ քաղաքիս ցունաց թաղը ծովեզերքը գտնուելուն՝ ցունաց մէկ մասը վրաններու տակ կը բնակին ընտանեօք. իսկ քանի մը Հայ ընտանիք միայն բացօթեայ տեղեր և բանջարեղինաց պարտէզները քաշուած են։ Քաղաքիս նկատմամբ այսչափ և եթ։ Գալով Ատաբազարի, Արմաշի, Սապանճայի և Էշմէի, աւելորդոյն՝ այն է Ատաբազարի մէջ քանի մը շէնքեր կործանած և չորս անձինք փլատակաց տակ մնալով մեռած են. Հայոց եկեղեցեաց երկուքը թեթև կերպով ճնասուած, իսկ ազգային հոյաշէն բաղնիքը անճնաս մնացած է։ Արմաշու վանաց տաճարը քիչ մը խախտեր և քանի մ'օր ժամերգութիւնը դադրեր է։ Սապանճայի մէջ ալ երեք խան փլելով քանի մ'անձինք մեռեր են։ Իսկ Սապանճայէն քիչ հեռաւորութիւն ունեցող Էշմէ գիւղը, որուն բնակիչները գրեթէ կէս առ կէս Տաճիկ և Յոյն են, աւելի ճնաս կրած և 25 ի չափ անձինք մեռած են փլատակաց տակ։

Նմանապէս Պաղչէճիկ գիւղի ծովեզերը Սէյմէն իսկէլէսի ըսուած տեղը քանի մը վայտաշէն մաղազաներ կործանած են բոլորովին։

Նամակս գրելու վայրկեանին 'ի ժամ 1/2 առաւօտու՝ երկրաշարժի ցնցում մ'ալ տեղի ունեցաւ բաւական սաստիկ, այլ անճնաս կերպով։

Երկկ ժամ 5 ին քաղաքիս Միթէսարրըֆ վ.սեմ. Ֆէյզի պէյ Հայոց Առաջնորդարանն այցելութեան գալով, կէս ժամու չափ տեսակցեցաւ Փ. Առաջնորդ Գեր. Ստեփանոս Ծ. վարդապետի հետ, որ արժանավայել ընդունելութիւն մ'ըրաւ Նորին Վ.սեմութեան։

Կըսուի թէ՝ քաղաքիս ծովախորշը խարըսխած Անգղիական զրահաւորաց հրամանատար Հօրնպիի ուրբաթ իրիկուն հրաման եկեր է շարժման վիճակի մէջ դնել զրահաւորները. բայց կիրակի առաւօտ երկրորդ հրաման մը գալով առաջին հրամանին գործադրութիւնը ետ մնացեր է։

Անգլիական զրահաւորին նաւաստիներէն 19 տարեկան երիտասարդ մ'ուրբաթ օրը մեռնելով Հայոց գերեզմանատան մէջ թաղուեցաւ հեռաւոր օրն առաւօտեան ժամ 1 ին. մեր Գեր. Փ. Առաջնորդը քահանայից հետ թաղման հանդիսին ներկայ գտնուեցաւ եկեղեցական զգեստով և հանդուսաւոր աղօթք կարդաց ննջեալին վրայ։ Այս մասին շնորհակալութիւն յայտնելու համար զրահաւորաց առաջին Արժ. քահանայն նոյն օրն Առաջնորդարան գալով տեսակցեցաւ Գեր. Փ. Առաջնորդի հետ։

Ժամանակիս անձուկ պարագայից պատճառաւ տեղւոյս ազգային վարժարանաց սահմանեալ հասոյթները նուազելով, ազգային եկամտից հաւասարակշռութիւնը խանգարած և Լ. դպրոցի մէկ քանի դասատուք հրաժարած էին։ Զայս տեսնելով Գեր. Փ. Առաջնորդ հայրը՝ անցեալ ամսոյ 30ին կիրակի առաւօտեան ժամերգութեան ատեն յատենի եկեղեցւոյ պարտաւորեցաւ ծանուցանել թէ Լ. դպրոցը մայիս 1 ին պիտի գոցուի՝ թէ որ ժողովուրդը դպրոցական ծախուց չնպաստէ, և յայտարարեց թէ՝ արդէն քանի մը շաբաթէ 'ի վեր դպրոցի աշակերտներէն շատեր դպրոցէն մեկնած ըլլալով, ծնողաց անտարբերութեան բնական հետևանքը սիրի լինի դպրոցը գոցել։ Գեր. Փ. Առաջնորդ հօր սոյն յայտարարութիւնը գուցէ բաղմաց զօղանջիւն թուելով, Հայ հասարակութիւնը փոյթ չըրաւ նոյն ակամայ յայտարարութեան ծանրութիւնը կշռել, ուստի մայիս 1ին Լ. դպրոցը միայն գոցուեցաւ։

Սակայն յայտնի էր որ այս ընթացքը տևական չէր կրնար լինել. հետևապէս Գեր. Փ. Առաջնորդն մէկ կողմանէ վարժարանաց հասոյթներն աւելցունելու հաստատուն առաջադրութեամբ հարկ եղած միջոցներն 'ի գործ դնելու սկսած ժամանակ, միւս կողմանէ հրաժարեալ դասատուները դոհ ընելու խոստմամբ զանոնք իրենց պաշտօնին մէջ վերահաստատելով, երէկ՝ երկուշաբթի՝ Լ. դպրոցը բացուեցաւ, որուն քիչ ատենէն նոր ուղղութիւն մը պիտի տրուի։ Ահա այս է բուն իրողութիւնը, զոր մէկ քանի Ազգ. լրագիրք և մասնաւորապէս Փունջ և Լրաբեր անուն թերթերը, ծամածռելով, ինչպէս կը պատմեն, տարբեր պատճառ և տարբեր գոյն տուեր են անոր, և ներքին վէճի և անհամաձայնութեան արդիւնք համարեր են զայն։

Խնդրելով որ ներկայս հրատարակելու չնորհ ընէք, Մնամ . . .

Խորով Թ. Էսկէճեան

---

10 մայիս 1878 ՅՕրթաքէյ

Հայկ. Կրթարան

. . . Խմբագրապետ Տէր.

Անցեալ կիրակէ օր Բարձրաչնորհ Ս. Պատրիարք Հայրն բարեհաճեցաւ այցելութիւն տալ Կրթարանիս՝ ընկերակցութեամբ Մեծ. Նորատունկեան Յակոբ Էֆէնտիի։

Նորին Սրբազնութիւնն, աշակերտաց դասարաններն և ննջարաններն շրջելէ ետեւ, իբր կէս ժամու միջոց հանգիստ առնելով՝ ուսանողաց մի քանի Հայերէն և Գաղղիերէն գրուածներն աչքէ անցուց և տեղեկութիւն ստացաւ 'ի մէնջ Կրթարանիս ուսմանց, ուսուցչաց և ներքին կարգադրութեանց վրայօք։ Նոյն միջոցին աշակերտք դաշնակի ձայնակցութեամբ կերգէին 'ի պատիւ մեծարոյ այցելուացն։ Նորին Սրբազնութիւնն հաճեցաւ իւր բարձր գոհութիւնն յայտնել մեզ Կրթարանիս յառաջադիմութենէն և քաջալերել զմեզ յանյողդողդ յարատևութիւն։ Նոյնն հաճեցաւ ընել և Մեծ. Նորատունկեան էֆէնտի։

Ի վերջոյ աշակերտք Ամեն. Հօր Սրբազան աջոյն 'ի համբոյր մատչելով՝ արժանացան լսել լու 'ի լու Նորին Սրբազնութեան գոհութիւնն 'ի մասին իւրեանց աշխատասիրութեան։

Այս մեկնեցաւ Սրբազան Հայրն վերըստին Նորատունկեան էֆէնտիի ուղեկցութեամբ, թողլով մեր և մեր սանուց սրտին մէջ չնորհակալութեան խորին զգացումներ, զոր կրթութեամբ յայտնել պատուական լրագրոյդ միջոցաւ և մատուցանել հրապարակաւ Նորին Բարձրաչնորհ Սրբազնութեան մեր ամենախորին մեծարանքն, որպէս և մեր ջերմ չնորհակալիքն առ Մեծ. Նորատունկեան էֆէնտի։

Հաճեցէք և դուք, . . . Տէր, ընդունել այսու առթիւ մեր յարգանաց հաստատիքը, Մնամ եմ

Յ. Գ-ԷՖԷՆ

---

## ԼՍԱՐԱՆ

### ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՅՕՐԹ-ՔԷ-Ղ

Կը ծանուցուի արդոյ հասարակութեան որ անցեալ երկուշաբթի աւուր դէպքն արդելք ըլլալով նոյն գիշերուան երեկոյթին, Գործ. խորհուրդս յառաջիկայ երկուշաբթի գիշեր (13 մայիս) ընել որոշեց իւր վերջին երեկոյթը։ Ատենադպիր

Օրթագիւղ 12 մայիս 1878 Գործ. խորհրդոյ Ց. Ծ. Վ. ԱՇՈՏ

## ՍԻՐԱՔ ԵՒ ՍԱՄՈՒԷԼ

*ԲԱՐԻ ՀՕՐ ԿՐԹԱԿԱՆ ԴԱՍԵՐ*

ԳՐԵՑ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Ն- Ի ԼՅՍ- ԸՆԴՅԼԵՑԻՆ ԱՂՆՈՍԱԿԱՆ ԵՂԲԱՐ-
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ՄԿԻՐՏԻՉ ԷՍԱԵԱՆ

*Ի ՆՈՒԷՐ*

ՀԱՅՈՑ ՀԱՐՑ ԵՒ ԶԱՐԳԱՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ

*կը ծախուի ամեն հայ գրավաճառաց քով. գին մէկ քսաննոց թղթադրամ։*

---

### ՇԻԹՔ ՄԱՆՈՒՆՔ

Ի ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԷ

Երկասիրեաց Հմայեակ Ծ. Վ. Դիմաքսեան

Օժանդակութեամբ

Եաղչիպէկեան եղբարց հարազատաց

*Մայրաքաղաքէս մինչև Եգիպտոս և Երուսաղէմ 32 քաղաքաց և գիւղերէից վրայ միճակագրական շահաւէտ տեղեկութիւններ պարունակող 368 երեսէ բաղկացեալ գիրք մ'է, Հայաստանեայց անուն տպարանէ մը ելած։*

*Կը ծախուի Եէնի գարուի և Մայր եկեղեցեաց բանկաներն և Կ. Պոլսոյ Հայ գրավաճառաց քով։ Գին կէս արծաթ մէճիտիէ։*

---

Ռ. Ց. ՊԷՐՊԷՐԵԱՆ

### ԱՌԱՋԻՆ ՏԵՐԵՒՔ

Քէրթուածք, Մահ Սոկրատայ, Ճառք,
Սայլ- ոյլ, Ցաւելուածք։

*Հեղինակն իւր ինչ ինչ ոտանաւոր և արձակ գրուածներն և Լամարդինի Գաղղեացի բանաստեղծին Սոկրատայ մահուն գրարար տաղաչափական թարգմանութիւնն ամփոփած է սոյն գրքուկին մէջ։*

*Կը ծախուի Եէնի-ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2, Ս. Ղ. և Եազմաճեան գրատունը, և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 1 քսաննոց թուղթ*

---

### ՄԱՐԻՈՆ ՏԸԼՕՐՄԻ ԽՈՍՏՈՎԱՆԱՆԸ

ԿԱՄ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐՓԱՆՔ

Հեղինակ Լօժէն տը Միրգուր

Թարգմանեց Դր. Զիլինկիրեան

*Սոյն նշանաւոր վէպին հինգ երորդայն է վերջինհատորն ալ Իզմիրի Ցէտէեան եղբարց տպարանէն Պոլիս հասած բլլալով՝ կը ծախուի Եէնի ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2։ Ս. Ղ. և Եազմաճեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 2 ֆր.*

---

### ԱՐԻՒՆԱԼԻ ՄԱՐԲԻԶՈՒՀԻՆ

ՀԵՂԻՆԱԿ

Ցաշ Կոմսուհի

Թարգմանեց Խ. Ե. Պուրունուզեան

*Սոյն գեղեցիկ վիպասանութեան, որ միայն երկու հատորէ կը բաղկանայ, երկրորդ հատորն ալ Իզմիրէն հասած բլլալով, կը ծախուի Եէնի ճամի Զիլինկիրլէր ճատտէսի, թիւ 2 Ս. Ղ. և Եազմաճեան գրատունը և այլ գրավաճառաց քով։ Գին 2 ֆրանք։*

---



## ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻԷԻ

### ՇՈԳԵՆԱԻՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1878 ՄԱՅԻՍ 1 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՉԵՒ ՄԱՅԻՍ 31

*ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԲԱՆՈՂ ՇՈԳԵՆԱԻՆԵՐԸ*

| Ժամ | Բոփորէն ելնող շոգենաւերը |
|---|---|
| 11 30 | Եէնիմահալլէէն, Մէզ. Պէյիւք. Թարապ. Եէնիք. Սմիւն. Էմիրկ. Ր. Հիսար, Պէպէք, Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիկթաշ։ |
| 11 45 | Արնավուտքէյէն, Գուրուչ. Օրթաք. Պէշիկ. Գապաթ. |
| 12 | Պէյքօզ, Բաշապ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիքէյ, Զէնկէլ. Պէյլէր. Գուզկունճուք, Գապաթաշ։ |
| 1 | Եէնիմահալլէն Մէզարպ. Պէյիւքա. Թարապ. Եէնիք. Գոյաճ. Ր. Հիսար, Պէպէք. Արնավ. Գուր. Օրթաք. Պէշիկ։ |
| 1 15 | Պէյքօզ, Բաշապ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկ. Պէյլ. Գուզկ։ |
| 1 45 | Ր. և Ա. Գավաքէն, Եէնիմահ. Մէզարպ. Պէյիւքա. Թարապ. Եէնիք. Սմիւն. Էմիրկ. Պոյաճ. Ր. Հիսար, Պէպէք, Արնավուտ. Գուրուչ. Օրթաք. Պէշիկթաշ։ |
| 3 | Պէյիւքա. Թարապիա, Պէյքօզ, Բաշապ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկէլ. Պէյլէր. Գուզկ։ |
| 3 | Մէզար. Պէյիւքա. Թար. Եէնիք. Ր. Փ. մահ. Սմիւն. Էմիրկ. Ր. Հիսար, Պէպէք. Վանիք. Պէյլ. Սիրքէճի-իսկէլէսի։ |
| 4 | Եէնիմ. Մէզար. Պէյիւքա. Թարապ. Եէնիք. Սմիւն. Էմիրկ. Պոյաճ. Ր Հիսար, Պէպէք, Արնավ. Գուր. Օրթ. Պէշիկ։ |
| 5 15 | Եէնիմ. Մէզարպ. Պէյիւքա. Թարապ. Եէնիք. Էմիրկ. Ր. Հիսար, Արնավ. Պէյլ. Օրթաք. Պէշիկթաշ։ |
| 6 15 | Եէնիմ. Պէյիւքա. Թարապ. Պէյքօզ, Եէնիք. Էմիրկ. Գանլ. Ր. և Ա. Հիսար, Գանտ. Արնավ. Զէնկ. Պէյլ. Օրթաք. Գուզկ. Պէշիկ. Իսկիւտար։ |
| 8 45 | Պէյիւքա. Թարապ. Պէյքօզ, Սմիւն. Պոյաճ. Ր. Հիսար, Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիկթաշ։ |
| 8 | Ա. և Ր. Գավաքէն. Մէզարպ. Պէյիւքա. Թարապիա, Եէնիք. Էմիրկ. Ր. Հիսար, Արնավ. Օրթաքէյ, Պէշիկ։ |
| 8 45 | Պէյիւքա, Պէյքօզ, Բաշապ. Ր. Փ. մահ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Զէնկ. Պէյլ. Գուզկ. Իսկ։ |
| 10 15 | Եէնիմահ. Մէզարպ. Պէյիւքա. Թարապ. Եէնիք. Էմիրկ. Ր. Հիսար Պէպէք, Արնավ. Օրթաք Պէշիկթաշ։ |

*Կոմբոյէն ելնող շոգենաւերը*

| | |
|---|---|
| 12 30 | Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Պոյաճ. Եէնիք Թարապ. Պէյիւքա. Մէզար. |
| 1 | Գապաթաշ, Իսկ. Պէշիկ. Գուզկ. Օրթաք. Պէյլ. Զէնկ. Արնավ. Գանտ. Ա. և Ր. Հիսար, Գանլ. Էմիրկ. Եէնիք. Պէյքօզ, Թարապ. Պէյիւքա. Եէնիմահ. |
| 2 | Պէշիկթաշ, Օրթաք. Արնավ. Պէպէք, Ր Հիսար, Էմիրկ. Սմիւն. Եէնիք. Թարապ. Պէյիւքա. Մէզարպ. Եէնիմահալլէ։ |
| 2 30 | Իսկիւտար, Գուզկ. Պէյլ. Զէնկ. վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Ր. Փ. մահ. Բաշ. Պէյքօզ, Պէյիւքա. |
| 3 15 | Գապաթ. Պէշիկ. Օրթաք. Պէյլ Արնավ. Ր Հիսար, Էմիրկ. Եէնիք. Պէյքօզ, Թարապ. Պէյիւք. Մէզարպ. Եէնիմահ։ |
| 5 | Պէշիկթաշ, Օրթաք. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկէն, Եէնիքէյ, Պէյքօզ, Թար. Պէյիւքա. Մէզար. Եէնիմահ. Ր. և Ա. Գավաք։ |
| 6 30 | Իսկիւտար, Պէշիկ. Գուզկ. Օրթաք. Պէյլ Զէնկ. Արնավ. Գանտ. Ր. Հիսար, Պոյաճ. Եէնիք. Թարապ. Պէյիւք. |
| 8 15 | Պէշիկթաշ, Օրթաք. Արնավ. Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիք. Թարապ. Պէյիւքա Եէնիմահ։ |
| 9 45 | Գուզկունճուք, Պէյլ. Զէնկ. վանիք. Ա Հիսար, Գանլ. Բաշապ. Պէյքօզ Թարապ. Պէյիւքաէրէ։ |
| 10 | Պէշիկթաշ, Օրթաք. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկէն, Եէնիք. Թարապ. Պէյիւքա. Մէզար. Եէնիմ. Գավաքներ։ |
| 10 30 | Գուզկունճուք, Պէյլ. Զէնկ. վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշապ. Պէյքօզ, Պէյիւք։ |
| 10 30 | Սիրքէճի-իսկ. Պէյլ. վանիք. Պէպէք, Հիսար, Գանլ. Էմիրկ. Սմիւն. Ր. Փ. մահ. Եէնիք. Թարապ. Պէյիւքա. Եէնիմահ։ |
| 11 | Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Պոյաճ. Էմիրկէն Եէնիք. Թարապ. Պէյիւքա։ |
| 11 | Գապաթաշ, Գուզկ. Պէյլ. Զէնկէլ. Վանիք. Ա. Հիսար, Գանլ. Բաշապ. Պէյքօզ։ |
| 11 35 | Պէշիկթաշ, Գուզկ. Օրթաք. Պէյլ. Զէնկ. Արնավ։ |
| 12 | Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավ։ |

---

### ԻՒՍԿԻՒԴԱՐ ԲԱՆՈՂ ՇՈԳԵՆԱԻՆԵՐԸ

| Իսկիւտարէն Կոմբոյէ. Ժամ | Ժամ | Կոմբոյէն Իսկիւտար. Ժամ | Ժամ |
|---|---|---|---|
| 12 | 6 35 | 12 15 | 7 45 |
| 12 30 | 7 15 | 12 45 | 8 |
| 1 | 8 | 1 15 | 8 20 |
| 1 30 | 8 30 Պէշիքթաշ | 1 45 | 8 5 |
| 2 | 9 | 2 15 | 9 20 |
| 2 30 | 9 35 | 2 45 | 9 50 |
| 3 | 10 | 3 15 | 10 15 |
| 3 30 | 10 20 | 3 45 | 10 40 |
| 4 | 10 45 | 4 15 | 11 |
| 4 30 | 11 5 | 4 45 | 11 20 |
| 5 | 11 25 | 5 15 | 11 40 |
| 5 30 | 11 40 | 5 40 Պէքթ. | 11 50 |
| 6 | 12 | 6 20 | 12 5 |

### ՈՒՐԲԱԹ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

| Իսկիւտարէն Կոմբոյէ. Ժամ | Ժամ | Կոմբոյէն Իսկիւտար. Ժամ | Ժամ |
|---|---|---|---|
| 12 | 5 30 | 12 | 5 35 Պէքթ. |
| 12 30 | 6 | 12 30 | 6 |
| 1 | 6 35 | 1 | 6 40 |
| 1 30 | 8 | 1 30 | 8 |
| 2 | 8 40 Պէշիքթաշ | 2 | 8 45 |
| 2 30 | 9 15 | 2 30 | 9 20 |
| 3 | 10 | 3 | 10 |
| 3 30 | 10 30 | 3 30 | 10 35 |
| 4 | 11 | 4 | 11 5 |
| 4 30 | 11 30 | 4 30 | 11 35 |
| 5 | 12 | 5 | 12 5 |

---

### ԱՅԵՐԻ ՎԻԿՕՐԸ

*Ով որ իր մաղերուն թափիլը չուզեր, «Այերի Վիկօր» կոչուած մաղի անուշահոտ ջուրէն գործածելու է. ուրիշ ամեն տեսակ մաղի ջուրերը կամ իւղերը՝ որ մաղ չի թափելու համար կը ծախուին, բոլորն ալ անօգուտ են. իսկ Վիկօրի օգուտը միլիոնաւոր փորձերով տեսնուած է, և Պոլսոյ ու գաւառաց մէջ օր օրի գործածողներուն թիւը կաւելնայ։ Անոնք որ իրենց մաղերուն գեղեցկութիւնը կորսնցնելու վրայ են, չուտով գործածեն աս ջուրէն որ՝ի վերջոյ չզղջանք թափելու վրայ եղող մաղերը կը հաստատէ ու կամրապնդէ, թափածներուն տեղը մաղ կը բուսցնէ երբոր մաղերուն արմատը ջնջուած չէ, ու ճերմկած մաղերը անպատճառ իր նախկին բնական գոյնին կը բերէ, գործածելուն կերպը տիկերուն հետ է. կը ծախուի Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և Ընկերաց Ամերիկայի Մագազան։*

---

### ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱՂԱԶԱՆ

*Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և Ընկերաց Ամերիկայի Մագազան կը ծախուի, ոգնիւ ճերմակ կտաւներ, ու սեղանի ծածկոց և այլն, սեղանի արծաթած պատառաքաղ, դրդալ և այլն. կապի Լամբաներ, սեղանի ճերմակ յախճապակէ սպասք Անգղիոյ տեսակէն, քարեօղներ, միլքէ ծածկոց, քմանէ սապան և այլն, խոհանոցի վերաբերեալ անօթներ, կաւի գործիքներ, և ուրիշ անթիւ պիտանի վաճառք կը ծախուին չափաւոր գներով։*

---

### ՕՃԱՌ

SUPER SUPER SOAP TABLET

*Անուշահոտ օճառ, մարթը կը կակուղցնէ ու լեղի ջուրով ալ կը փրփրի, տեսակը խիստ աղնիւ ու գինը շատ աժան է. կը ծախուի Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղազան։*

---

*Այս լրագիրը չաբաթը երեք անգամ կը հրատարակուի, երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերը։ Բաժանորդագրութեան տեղերն են Ղալաթիա Սանտրքճրլար ճատտէսի թիւ 198, Գ. օրս խան Մասիսի խմբագրատունը։*

*Իսկ գաւառաց մէջ հետեւեալ հոգաբարձուաց սենեակները։*

ԻԶՄԻՐ. Սահփան աղա Ցէտէեան.
ՆԻԿՈՄԻԴԻԱ. Թոսրով էֆ. Լսկիճեան.
ՊՐՈՒՍԱ. Սահփան աղա Թանկէրեան.
ԹԷՔԻՐՏԱՂ. Յովակիմ աղա Ուզունարդեան.
ՏՐԱՊԻԶՈՆ. Խաչատուր աղա Լիմասեան
ԿԱՐԻՆ. Կարապետ պատուելի Զաքարեան.
ՎԱՆ. Կարապետ աղա Նաթանեան.
ՄՈՒՇ. Մկրտիչ աղա Փոթիկեան.
ԵԱՇ. Մ. աղա Խաչիկեան.
ՖՈՒՔԵԱՆ Ֆէրհատ աղա Ա. Ֆէրհատեան
ԵՐԶՆԿԱՑ. Թադէոս աղա Բայբուրտուեան։
ՍԻՎՐԻՀԻՍԱՐ. Սրժ. Իսրէլ.

*Բերիչ քաղաքներէ ատարագրութիւններն աս տեղերէն մէկուն հետ կրնան թղթակցիլ։*

---

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

Կ. Ս. ԻԹԻՃԵԱՆ

Ի ՀՅԱԼԲԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ
ՂԱԼԱԹԱ ՆՈՐՕ ԽԱՆ